Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1345³-27.04.2026-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունվարի 20-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) ամբողջ տեքստում «տեղեկանք» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «վկայական» բառով՝ բացառությամբ Օրենքի 2-րդ հոդվածով լրացվող 3-րդ հոդվածի 15-րդ պարբերության, Օրենքի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի 4-րդ մասի և Օրենքի 18-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածով փոփոխվող 3-րդ հոդվածի 1-ին մասի տասնչորսերորդ պարբերությունից հանել «կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը փոխանակելու,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածով փոփոխվող 7-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին պարբերությունը «ստանալու» բառից հետո լրացնել «վարչական վարույթ իրականացնելու» բառերով .

2) Երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված կատեգորիայի օտարերկրացուն և նրա ընտանիքի անդամին բնակության օրինականությունը հավաստող վկայական տալու վարչական վարույթ իրականացնելու և կարգավիճակը հավաստող փաստաթուղթը տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով, որը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով հնարավոր է վճարել նաև առցանց:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածով փոփոխվող 14-րդ հոդվածի 3-րդ մասում «, ներառյալ՝» բառերը փոխարինել «և» բառով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածով փոփոխվող 17-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «կացության քարտ տրամադրելը,» բառերը.

2) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված էլեկտրոնային միասնական հարթակի գործարկման մասին իր պաշտոնական կայքում միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բայց ոչ ուշ, քան 2026 թվականի նոյեմբերի 1-ը: